ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՄՐՑԵԼ ԵՆ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

05.04.2014 13:20

Հայաստանի շախմատի ակադեմիայում այսօր՝ ապրիլի 5-ին, կազմակերպվել էր ընկերական մրցաշար ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ ոստիկանության միջև:
Բացման խոսքով հանդես են եկել ՀՀ փաստաբանների պալատանի նախագահի արտաքին կապերի գծով խորհրդական, պալատի մարզամշակութային ակումբի նախագահ Վրեժ Խաչիկյանը, ՀՀ շախմատի ակադեմիայի հիմնադիր նախագահ Սմբատ Լպուտյանը և ՀՀ Ոստիկանության մարտական և ֆիզիկական պատրաստականության բաժնի պետ, ‘Դինամո’ ՄՀԿ նախագահի առաջին տեղակալ ոստիկանության փոխգնդապետ Գառնիկ Հայրապետյանը:

Խաղի կազմակերպիչներն ողջունել են մասնակիցներին և ընդգծել, որ այս ընկերական մրցաշարը իր տեսակով առաջին անգամ է կազմակերպվում Հայաստանում:
Փաստաբանների պալատի նախագահի խորհրդական Վրեժ Խաչիկյանը բացման իր խոսքում նշել է. ‘Այս մրցաշարը հնարավորություն է տալիս ամրապնդել ոստիկանների և փաստաբանների միջև բարիդրացիական կապը, որի նպատակը երկու կողմերի միջև իրավապաշտպան և իրավապահպան, գործնական, աշխատանքային հարաբերություններում իրականացնել ավելի արդյունավետ և հանդուրժողական, համատեղ աշխատանք, ինչից շահում է մեր հասարակությունը’:
Փոխգնդապետ Գառնիկ Հայրապետյանը ՀՀ Ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի անունից ողջունել է խաղի մասնակիցներին և մաղթել հաղթանակ:
Խաղը վարում էր միջազգային կարգի մրցավար Արմեն Նիկողոսյանը: Մրցակիցները մրցել են շերենինգենյան ոճով:
Յուրաքանչյուր կողմից ներկայացվել են վեցական ներկայացուցիչներ: Անգիջում մրցապայքարում ՀՀ ոստիկանության թիմը 19,5 -16,5 հաշվով հաղթել է ՀՀ փաստաբանների թիմին: Անհատական մրցապայքարում լավագույն խաղացողներ են ճանաչվել փաստաբանների թիմից Արմեն Վարդանյանը, իսկ ոստիկաններից՝ Դերենիկ Ուզունյանը:
ՀՀ փաստաբանների պալատը նույնպես շնորհավորում է ոստիկան գործընկերներին հաղթանակի կապակցությամբ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 1){ updateCommentsCount(window.location.href); } })